## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նազենի Ղարիբյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Տուլուզ (Ֆրանսիայի Հանրապետություն)
2018 թվականի նոյեմբերի 4-6

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

«Տուլուզ մետրոպոլ» և «Ֆրանս Ուրբեն» կազմակերպություններ

- **ՆՊԱՏԱԿԸ**

— Մասնակցություն «Եվրոպական մշակութային մայրաքաղաքներ. առաջին ֆորում» («1er Forum des Métropoles Culturelles Européennes») խորագիրը կրող համաժողովին;

— Մասնակցություն «Տաճարի պահապանը» ներկայացմանը:

Ս. թ. նոյեմբերի 4-5-ը Ֆրանսիայի Տուլուզ մետրոպոլիայի իշխանությունների և Ֆրանս Ուրբենի հանրապետական վարչության պաշտոնական հրավերով գործուղման էի մեկնել Տուլուզ քաղաք՝ մասնակցելու «Եվրոպական մշակութային մետրոպոլիաների առաջին ֆորումին», որը նվիրված էր մետրոպոլիաների՝ մարզային կենտրոնների և շրջակա համայնքների ապագա մշակութային քաղաքականություններին:

Առաջին օրը՝ նոյեմբերի 4-ին, Տուլուզ մետրոպոլիայի մշակույթի դեպարտամենտի նախագահ Ֆրանսուա Լաժուզանի ուղեկցությամբ այցելություն կատարեցի քաղաքի հուշարձաններ և հնագիտական թանգարան, ապա մասնակցեցի «Տաճարի պահապանը» փողոցային ներկայացման ցերեկային միջոցառումներին: Այս ներկայացումն իր ծավալներով ամենամեծ միջոցառումն է դիտարկվում տարածաշրջանում, որ միջազգային լայն հնչողություն է ստացել: Այն տևել է չորս օր, որոնց ընթացքում հունական դիցաբանությունից ներշնչված հսկայական ռոբոտ-կերպարները շրջում էին քաղաքով մեկ և իրար հանդիպում՝ թատերական արարներով: Ներկայացումը դիտելու էր եկել ավելի քան երեք հարյուր հազար քաղաքաբնակ և այցելու: Ներկայացումը նախատեսված էր որպես հանրահռչակում՝ Տուլուզի հին պատմական օդակայանի տարածքում բացվող «Ալ դե Մաշին» (Մեքենաների սրահ) կոչվող ռոբոտների թանգարանի բացման համար:

Օրվա երկրորդ կեսին հրավիրված էի Տուլուզի քաղաքապետարան, որտեղ ինձ ընդունեց քաղաքապետ և մետրոպոլիայի խորհրդի նախագահ Ժան-Լյուկ Մուդենկը: Ներկա էին նաև Ֆրանսիայի մշակույթի նախարարության մարզային դեպարտամենտի վարիչը, նախարարության այլ պաշտոնյաներ, Ֆրանսիայի տարբեր մետրոպոլիաների խորհրդի նախագահներ, խորհրդարանի պատգամավորներ: Պաշտոնական ընդունելությունից հետո մասնակիցները, քաղաքապետի գլխավորությամբ հրավիրվեցին դիտելու փողոցային ներկայացման վերջին արարը, որ տեղի ունեցավ երեկոյան, Տուլուզի ամենահին կամրջի վրա:

Հաջորդ ամբողջ օրը մասնակցեցի ֆորումին, որի ավարտին ելույթ ունեցա՝ ներկայացնելով ՀՀ կառավարության մշակութային նոր քաղաքականությունը, մշակույթի նախարարության հռչակած ռազմավարական կարևոր ուղղությունները և գերակայությունները, ինչպես նաև անդրադարձ կատարեցի օրվա ընթացքում ներկայացված զեկուցումներին՝ կարծիք հայտնելով արտահայտված տեսակետների, իրագործվող ծրագրերի և նախագծերի, մշակութային քաղաքականությունների վերաբերյալ:

Այս առումով հատկապես հետաքրքիր էին մարզերում համայնքային և միջհամայնքային մշակութային զարգացման, մշակութային և գեղարվեստական կրթության, «փողոցային արվեստի» կենտրոնների գործունեության, մշակութային միջոցառումներին հանրային ակտիվ մասնակցության վերաբերյալ փորձառությունների փոխանակումն ու նորարարական առաջարկները, որոնք կներկայացվեն նախարարությանը՝ Հայաստանում դրանց կիրառման հնարավորությունները քննարկելու համար:

Գործուղման ընթացքում կապ հաստատեցի Լիոն, Մանս և Մոնպելիե քաղաքների մշակույթի պատասխանատուների հետ, ինչպես նաև «Ֆրանս Ուրբեն» ասոցիացիայի աշխատակիցների հետ, որոնք հետաքրքրված էին ինչպես երկկողմ, այնպես էլ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շրջանակներում Հայաստանի հետ համագործակցությամբ:

Տուլուզ մետրոպոլիայի մշակույթի դեպարտամենտի նախագահ Ֆրանսուա Լաժուզանն առաջարկեց փոխադարձաբար հրավեր կազմակերպել տեղի պետական թատրոնի և Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բալետային ներկայացումները ցուցադրելու համար, ինչպես նաև համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց Կապանում երգեհոնի միջազգային փառատոն կազմակերպելու համար, քանի որ Տուլուզ քաղաքում արդեն մի քանի տարի է, ինչ կազմակերպվում է նմանատիպ փառատոն (Կապան քաղաքն ունի հազվագյուտ երգեհոնային դահլիճ, որն այսօր նպատակային չի օգտագործվում, իսկ երգեհոնը վերանորոգման կարիք ունի):

Զրույցի ընթացքում խոսք գնաց նաև ՀՀ մարզային մշակութային զարգացման, հատկապես՝ «մշակութային տուն-կենտրոնների» ծրագրի շրջանակներում երկկողմ համագործակցության մասին: Լինելով հենց մարզային մշակութային զարգացման մասնագետ՝ պարոն Լաժուզանը նաեւ իր անձնական օգնությունն առաջարկեց հայաստանյան ծրագրի նախագծման և իրականացման գործում խորհրդատվության և անմիջական մասնակցության համար:

Գործուղումից վերադարձի հաջորդ օրը պաշտոնական նամակ ստացա «Ֆրասն Ուրբեն» ասոցիացիայի խորհրդական Դավիդ Կոնստան-Մարտինյիից, որն իրենց կազմակերպությանն օգնությունն ու համագործակցությունն է առաջարկում՝ տարբեր ծրագրերի իրականացման համար:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն «Եվրոպական մշակութային մետրոպոլիաների առաջին ֆորումին:
2. Զեկույց ՀՀ նոր մշակութային քաղաքականության և ռազմավարական ուղղությունների վերաբերյալ:
3. Փորձի փոխանակում և մշակութային քաղաքականությանը վերաբերող տարբեր գաղափարների, մեթոդների, ծրագրերի ուսումնասիրություն՝ ՀՀ-ում հնարավոր կիրառության նպատակով, հատկապես՝ մարզային մշակութային զարգացման և մշակութային ու գեղարվեստական կրթության ոլորտների համար:
4. Մասնակցություն «Տաճարի պահապանը» աննախադեպ փողոցային ներկայացմանը, որտեղ ժամանակակից տեխնոլոգիաների ու արվեստի միասնությամբ ստեղծվել էին հունական դիցաբանության երկու հսկայական չափերի ռոբոտ-կերպար՝ Մինոտավրոսն ու Արիադնա սարդը: Փորձը ուսանելի և կիրառելի է հայաստանյան պայմաններում:
5. Տեղի մշակութային վարչության ղեկավարների հետ հանդիպման արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ բալետային ներկայացումների փոխանակման, Կապանում երգեհոնի միջազգային փառատոնի կազմակերպման, ինչպես նաև մարզերում «մշակութային տուն-կենտրոնների» ծրագրի կոնցեպտի մշակման և իրագործման մեջ հնարավոր աջակցության վերաբերյալ:

6. Կապեր են ստեղծվել Ֆրանսիայի մի քանի մարզային կենտրոնների մշակույթի պատասխանատուների հետ՝ ապագա համագործակցության համար, այդ թվում նաև՝ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շրջանակներում:

08.11.2018